

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ է Ամուսնութիւնը, Դիւրակեցութի՞ւն, թէ Հերոսութիւն
2. Արուեստագիտութիւն և Աստուածաճանաչում
3. Աղամ և Եւա
4. Խառնաշփոթ Դիւրիմացութիւն
5. Ամուսնալուծում
6. Սրբազան Ուխտը
7. Արարողութիւն Առանց Հաղորդութեան

M A R R I A G E

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

2009

ԻՆՉ Է ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԴԻԻՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ, ԹԷ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ

Դիւրակեցութիւնը համայն մարդկութեան տեսութիւնն է: Ժան Փօլ Սարթր ընդհանրացուց կեանքի դատարկութեան տեսութիւնը: Ան տեսաբանաց ու ճառեց վերջնական ոչնչութիւնը կեանքին, ցոյց տալով կեանքի անիմաստ պատճառը և ջարժադիթը: Իսկ Մարդեղացեալ Յիսուս, սիրեց մարդկութիւնը ու զոհեց Իր կեանքը, որովհետեւ նշմարեց մարդկային կեանքին արժէքը և որքա՞ն երջանիկ դառնալու հնարաւորութիւնը: Առանց ներքին տեսութեան և հոգեմացական լուսաւորութեան չի կայ գեղեցկութիւն և երջանկութիւն: Հաւատքը մինչեւ որ տեսութիւն և վարժութիւն չդառնայ, հաւատացեալը իրաւունք չ'ունի վկայ ըլլալու, (Բարոզելու): Որովհետեւ վկա՞ն միայն իր տեսածը ըսելու իրաւունքը ունի, ո՛չ թէ հաւատացածը: Քրիստոնէութեան առաւելութիւնը այն է, որ ան տեսութիւն մը չէ միայն ոչ ալ վարդապետութիւն մը, այլ՝ մարմնաւորումը՝ Յիսուս Քրիստոսի *Անձ նաւորութիւնը* և ապրումը:

Մարդ արարածին տարբերութիւնը վայրի գազաններէն, Յիսուս կը նշմարէ մարդոց աստուածակերպար նմանութիւնը և անոնց յոյսի ու ապագայի յաջողութիւնը Իր Անձին մէջ: Մարդ արարածը նախապատմական ժամանակներէ ի վեր աղօթող և գերբնական էակի մը հաւատացած և յուսացած է: Ոեւէ պատմագետ և իմաստասէր հետախոյզ չի կրնար ուրանալ այս իսկութիւնը: Որպէս վերոյիջեալ խօսքին ապացոյց, "հեթանոս" կոչուած ազգերու աստուածները, անոնց բազմիւնները և զոհագործութիւնները, ըլլան անոնք կենդանական կամ մարդկային, ենթակային ներքնագոյն զգացումներէն կը բխին: Անկարելի է անտեսնել մարդկային միտքն ու սիրտը, տրամաբանութիւնն ու զգացումը, դատողութիւնն ու զգայականութիւնը:

Ամէն հերոս միակ է և արթուն՝ Բնացողներու՝ աշխարհին մէջ: Յիսուս է հերոսներու անփառունակ մահը: Ինչո՞ւ, որովհետեւ մարդկութեան մեծամասնութիւնը կը Բնանայ: Չունի տեսիլքն ու Բաջութիւնը կրկին և կրկին փորձելու: Միայն Բիչե՛րն են անոնք, որոնք կը հերոսանան ու կը բարձրանան համայն մարդկային խաժամուժին մէջէն: Յունաց դիցաբանութեան մէջ ամենանշանաւոր հերոսն էր Հերակլէս: Իլիականի հերոսն է Ախիլլէսը, Ռդիսականի հերոսը՝ Ռդիսեւսը, ԲաՖՖիի գլխաւոր պատմական վեպի հերոսը՝ Սամուէլ: «Հերոս» մակդիրը, մերօրեայ ըմբոսնումով չափազանց աժանցած է: Յիսուսի հերոսական նկարագիրը Անոր հերոսական յուսադրումին և անձնագոհութեա՞ն մէջն էր:

1. Այս յոյսը միացած ու կցուած էր դիւցազնական սիրոյ և հաւատքի հետ:
2. Անոր յոյսին, սիրոյն և հաւատքին ակնադիւրը Իր Աստուածնորդութեա՞ն մէջն էր: Այսօր եւս կեանքի ու պայքարի հերոսական ուղին Յիսուս

Քրիստոսի ճանապարհին է՝ սիրել և անձը ուրանալ:

Յիսուսի ճանապարհին միայն **սէրը** կը հերոսանայ, **հաւատքը** կը սրբանայ և **զոհողութիւնը** կը դիւցազնայ: Աստուծոյ ո՛ւժը ներարկեցին հաւատքի և յոյսի հերոսները իրենց ժողովուրդին սրտերէ՛ն ներս, ուժը որ նախ իրե՛նց անձնաւորութեան մէջ տարրացած էր: Վասնզի հերոսները, և տեսանողները՝ ժողովուրդներու և Գերբնական Ուժին միջեւ շօշափման միջնորդներն են: Քրիստոնեայ զոյգի մը ամուսնութիւնն ու սիրով ապրիլը հերոսութիւն է: Ամուսնացած անձի մը, ինքն իր հանդէպ բացարձակ անկեղծ ըլլալը բարոյական հերոսութիւն է: Ամուսնութեան մէջ պայքարն ու խոյանքը սրբացած հերոսութիւններ են, իսկ ամուսնալուծութիւնը՝ տկարութիւն և դասալիք ըլլալ է կեանքէն:

Յիսուս բացայայտօրէն ըսած է, նոյնիսկ սիրով ամուսնացողներուն.

**«Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենամ,
սակայն Բաջալերուեցէ՛ք, որովհետեւ ես
յաղթեցի աշխարհին»--Յով. ԺԶ. 33:**

Ընտանեկան պատիւ և քրիստոնէական բարոյականութիւնը, երկու մեծ հիմերն են հայ ամուսնութեան: Ամուսնութեան ընթացքին Ա. Հոգին կը միացնէ այրն ու կինը, որոնք կը դառնան մէկ մարմին: Ամուսնալուծումը ուրեմն կը դառնայ մեղանշում Ա. Հոգւոյն դէմ: Ամուսնութեան սէրը կը գտնուի միայն անձնուրաց ծառայութեան մէջ: *«Բոլորդ ալ պատուեցէ՛ք ամուսնութիւնը և ամուսնական կապը տուրք պահեցէ՛ք, որովհետեւ Աստուած կը դատապարտէ ջնացողներն ու պոռնկութիւն ընողները»* --Կրտէ առաքեալը: --**Եբր. ԺԳ. 4:** Ամուսնութիւնը, Քրիստոնէական հասկացողութեամբ, մարտահրրաւեր մըն է հաւատացեալին:

"Ազատ սիրոյ" գաղափարը հրաշալի է, բայց պատիւը աւելի վեհ գաղափար է- **Ռաբինտրանտ Տօգոր**, Հնդկիկ իմաստասեր մը: Ամուսնութիւնը խոստում մըն է ուրախութեան և երջանկութեան և ընդունելութիւն մը հերոսութեան: Ամուսնութիւնը ըստ **Յովհան Ոսկեբերանին** յաղթանակ մըն է խոստր կիրքերու դէմ: Ամուսնութեան պսակադրութիւնը կը խորհրդանշէ ամոլին յաղթանակը ընդդէմ ծուռ կիրքերու: *«Քրիստոնեայ ըլլալ և չի վկայել կը նշանակէ ըլլալ արեւ և չի ճատագայթել, ըլլալ ամպ և չ'անձրեւել, ըլլալ արիւն և տառիչ սրտին մէջ...»* --**Գորեգին Ա. կաթողիկոս:**

Միակնութիւնն է որ կ'ապահովէ ամուսնական ամոլին հաստատութիւնը՝ մեծապէս կը նպաստէ ընտանիքին միութեանը, անձնուիրութեանը և ուրիշ բոլոր առաքինութիւններուն: Առանց Քրիստոնէական հեռոսական հաւատքի ընտանիք, կրօնք, և մարդկային արժանապատուութիւն կ'ապականուի և անոր սրբութիւնը կը կորսուի: Հայ ընտանիքը ճկունութիւնը ունեցած է ոչ միայն կացութեան յարմարելու, այլեւ սերունդէ-սերունդ փոխանցելու մեր լեզուն,

կրօնը, աւանդութիւնները և բարոյական արժէքները: Ընտանիք և հայրենիք խորհրդանշող բառերը անեզր իմաստներ կը պարունակեն: «Տուն և ընտանիք փոքր թագաւորութիւն մըն է ու եթէ ժողովուրդ մը կը յառաջդիմէ, իր առաջին բայը ընտանիքէն կ'առնէ: Ընտանիքը ժողովուրդի մը փառքի տաճարն է, ոյժն ու բազուկը, կամ ալ ժողովուրդի մը զեղծման սկզբնաւորութեան և կորուստի ճամբայ բացողը»-- **Խրիմեան Հայրիկ:** «Ժողովուրդներ և ազգեր միայն հացով չեն ապրում, թագաւորութեամբ և ազատութեամբ չեն բարձրանում, այլ առաւել բարոյական շնորհալի կեանքով, և այդ կենսական կեանք տուողը ընտանեկան սուրբ օճախն է»-- **Խրիմեան Հայրիկ:** Մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի պատուէրը, ոչ միայն սիրել է մեր թշնամիները, այլ *«Բարութիւն քրէ՛ք ձեզ ատողներու նա»:* Ընտանիքներու մէջ պատահած բազմաթիւ վէճերն ու անհամաձայնութիւնները պիտի հարթուին եթէ ենթակայ զոյգերը կատարեն վերեւ յիշուած պատուէրը: Միրել, կարթն է միասնականութեան:

Տան մը մայրը երբ լրիւ ժամանակով կը հրաժարի իր բնատուր մայրական առաքելութենէն և նետուի շուկայի ասպարէզ, հոգեկան տարր մը կը պակսի այդ ընտանիքէն:

Քանի՞ եկեղեցի, անփորձ ամուսնանալ փափաքողներու խորհրդատու ունի:

Որքան ալ արդի մայրը ուսեալ տիտղոսակիր ու արհեստավարժ է, պարտ է նաեւ ժամանակ տրամադրէ իր զաւակներու զարգացումին և կրօնական դաստիարակութեան: Աւանդապահ մօր գլխաւոր մտահոգութիւնը իր ընտանիքն է, իսկ արդի *«ազատազյուս ած»:* կնոջ մտահոգութեան առանցքը, առաւելաբար, իր անձին շուրջ կը դառնայ: Արդի կինը պերճանքի ետեւ է:

Ամուսնութիւնը նպատակ մը հետապնդել է, պայքար մըն է կատարելութեան՝ Աստուծոյ նմանութեան հասնելու: Այժմ կ'ապրինք աշխարհի մը մէջ ուր տեսապէս պայքար կայ խաւարին և լոյսին, չարին և Բարիին միջեւ: Բրիստոնեայի մը կենցաղավարութիւնը յարածամ պայքար մըն է մեղքին ու չարին դէմ, Աստուծոյ շնորհիւ և օգնութեամբ: Աստուծոյ նմանիլ, Անոր նման տա՛լ է, զոհուի՛լ է որովհետեւ միայն մենք զմեզ նուիրելով և ծառայասիրութեամբ և սպառելով մենք զմեզ ուրիշները բարձրացնելու, պիտի դառնանք անսպառ և աջակից Աստուծոյ:

Ինչո՞ւ ամուսնութիւնը հերոսութիւն է և ընտանիք կազմելը պայքարամարտ և գոյամարտ: Ինչո՞ւ:

Որովհետեւ մարդաշխարհը ճանչցող և գայն մարդկութեան ներկայացնողներ եղած են ա՛յն անձերը, որոնք հերոսաբար և յարատեւօրէն հետազօտած են մեր երկրագունդը՝ հիւսիսային, հարաւային բեւերները, ովկիանոսները, անապատներն ու ահասարսուռ գագաթները չիմալայան լեռներու և ծովերու խորերը, յայտնելու անծանօթին իրականութիւնը համա՛յն մարդկութեան որ ճանչնայ այն տունը, որ մարդիկ կը կոչեն երկրագունդ:

**Հերոսութիւն կարելի է գործել ոչ միայն կռուի
դաշտին վրայ, այլ և խաղաղ աշխատանքի ասպարէզին:**

Համայն մարդկութիւնը, այսօր, կը վայելէ անթել հեռագրի օգնութիւնը, որովհետեւ **Մարթօնի** անուն հերոս մը, տարիներ յարատե փորձերէ ետք ու բազմաթիւ անգամներ ձախողանքէ վերջ, յաջողեցաւ իր հաւատքին, յոյսին և սիրած գիւտին յայտնագործութիւնը շնորհել մարդկութեան և փրկութեան պատճառ ըլլալ անհամար յուսահատ կեանքերու:

Ինչո՞ւ հերոսանալ:

Ընդհանրապէս ազգեր կը հպարտանան իրենց հերոսներով և անոնց բազմագործութիւններով, ըլլայ գիտական կամ ուսումնական ճակատներու վրայ: Նոյնպէս նաեւ Արարիչ Աստուած պիտի ուրախանայ երբ տեսնէ Իր հողաշէն արարածներուն մէջ հաւատացեալներ, որոնք ուրանալով իրենց եսական փառքն ու հանգիստը կը ջանան նմանիլ իրենց Տիրոջ ու դառնալ աննախընթաց հերոսներ, ոչ միայն յաղթելով դիւրակեցութիւնը, այլ յաղթելով մարմնական հաճոյքներն ու վայելքները, իրագործելու դժուարագոյն և մարդկօրէն անկարելի սեպուած իրողութիւնները:

Ճպուռն ու մրջիւնը

«Մրջիւն եղբայր, այս ի՞նչ գործի վրայ ես, ամբողջ օրը հողի հատիկներ կը վերցնես, կը տանիս անդին կը ձգես:

-Զե՛հ տեսներ, կը պատասխանէ մրջիւնը, կ'աշխատիմ այս լեռը ծակել և լերան միւս կողմը գտնուող սիրածիս միանալ:

-Բայց, մէկ մէթը չծակած կեանքդ կը վերջանայ, կը ճչայ ճպուռը:

-Այո՛, կը պատասխանէ մրջիւնը, կեանքս կը վերջանայ, բայց **կը**

մեռնիմ սիրածիս ճամբուն վրայ...»

Յիսուս ալ մեռաւ Իր սիրած Եկեղեցիին համար: Ան օրինակ մը ձգեց մեզի, որպէսզի մե՛նք եւս հերոսաբար ապրինք կատարելու Իր պատուիրանները, որոնք ջատեր կը կարծեն թէ անկարելի են:

**Միայն Յիսուսը սիրողներն են որ կը փորձեն կատարել,
ինչո՞ւ, որովհետեւ նախ Յիսուս սիրեց մեզ:**

Մայիս 27, 2005

Թորոնթօ

ԱՐՈՒԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՃԱՆԱԶՈՒՄ

Արուեստագիտութիւնը այն հնարագիտութիւնն է որուն միջոցաւ իմացական, բանաւոր և գիտակից անձ մը կ'իրագործէ և կը յօրինէ, սիրոյ և նուիրումի միջոցաւ, այն տեսանելին և մարմնաւորը ու շօշափելին որ ուրիջներու աչքին տակաւին անտեսանելի, անշօշափելի ու երեւակայական կը մնայ:

Արուեստագէտն ու Բահանան կը պատկանին նոյն վսեմ ու նուիրական մարզին և առաքելութեան, Առաջինը արտայայտիչն է անտեսանելիին՝ գեղեցիկին, ճշմարիտին, արտայայտիչը մարդ արարածին *մարմնակա՛ն*, տեսանելիութեան, իսկ Բահանան յայտնաբերողն է անտեսանելի Աստուածը մարդու *հոգիին և իմացականութեան*:

Հիմնական արուեստ կը նկատուին՝ նկարչութիւն, Բանդակագործութիւն, Ճարտարապետութիւն, բանաստեղծութիւն, երաժշտութիւն և պար: Վերոյիշեալ արուեստներէն մոռցուած կը մնայ ամուսնական կենակցութիւնը որ ջատաւելի հմտութիւն, ճարտարութիւն և հնարագիտութիւն կը պահանջէ, Բան որեւէ ուրիջ արուեստ, որովհետեւ ամուսնական կենակցութեան ստեղծագործումը, նախ այդ երկու անձերու, և երկու կամբերու միաձուլման կը կարօտի, երկու ներքին **ես**-երու ներդաշնակութեան և համարդրութեան:

Ինքնութեան, անձնականութեան և անհատականութեան միացում, յօժարութեամբ ու միասնաբար կարենալ կենակցիլ, տիեզերքի ամենամեծ արուեստն է: Որովհետեւ այսպիսի ապրում մը կարելի կ'ըլլայ միայն սիրով, հասկացողութեամբ և կարեկցութեամբ որ մարմնացումն է Արարիչին ստեղծագործ արտայայտութեան:

Հետեւաբար բոլոր ամուսնացեալ զոյգերը որ կրցած են ապրիլ իրարու հետ՝ արուեստագէտներ են ու Բահանաներ որ ցոյց կու տան սիրոյ և լոյսի զօրութեան գերակայութիւնը, որպէս յաղթանակ խաւարի և անջատումի պարտութեան:

Կեցցէ՛ և ապրի՛ ամուսնութեան սուրբ և նուիրական խորհուրդը և զայն իրագործող արուեստագէտ զոյգերը:

**Դեկտ. 19, 1989
Թորոնթօ**

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ

Ադամ երբ դարձաւ ինքնագիտակից՝ և ստացաւ իր ուրոյն ինքնագիտակցութեան դրոշմը, շնչաւոր կենդանիներէն ոչ մէկը արժանացաւ ըլլալ իրեն կին: Ադամ՝ թէեւ փորձեց տեսնել իր նմանը բոլոր կենդանիներուն մէջ, մանաւանդ իւրաքանչիւրին երբ անուն մը տուաւ, սակայն իրեն վայել իր խառնուածքին և նկարագրին յարմար որեւէ մէկը չգտնուեցաւ:

Ադամ՝ մարմնապէս կրնար կենդանիներու նմանիլ իր բազմաթիւ երեսակներով: Ադամին գերագոյն յատկութիւնը, իր **ինքնութիւնն** էր: Ադամ ոչ միայն ինքնաճանաչ էր իր անձնայատուկ գերակայութեան և նկարագրին, որով անուն դրոշմեց իւրաքանչիւր անասունին, այլ՝ կենդանիները կը դիտէին բնական հողն ու կաւը միայն ուրկէ կերտուեցան, իսկ Ադամ ճակատը սեւեռած էր արեւին ու աչքերը աստղերուն: Անոր ինքնագիտակցութիւնը ճառագայթած էր երկինքէն ու իր սրտին մէջ կը ցոլանար իր Արարչին նմանութիւնը: Անասունները ոչ միայն չ'ունէին ինքնագիտակցութիւն, այլ՝ իրենց անուններն անգամ Ադամ դրոշմեց և կնքեց:

Ադամ թէեւ գիտակցութեամբ գերազանց էր և իրն էին դաշտի բոլոր գազաններն ու կենդանիները որպէս սիրուն խաղակից, սակայն ան կը տեսնար ունենալ՝ իր նմանութեամբ և իր յատկանիշներով նաեւ կին մը:

Աստուած երբ տեսաւ Ադամին երազն ու տեսնչը, անոր որոնումն ու պրպտումը գտնելու ի՛ր նմանը, Աստուած ժամանակը հասած համարեց որ Ադամ ստանայ իր հոգեկան լրումը :

Աստուած կրնար եւան ալ ջինել կաւէ և հողէ ինչպէս ջինած էր Ադամը: Սակայն Ադամին փնտրածը իր նմանը չէր, այլ գին՝ *լրացնողը* և ամբողջացնողը: Ադամին հոգեկան թոհիչքը՝ ներշնչումի և ոգեւորութեան հորիզոններ կը փնտռէր ու ոչ միայն ի՛ր նմանը: Իր նման էակ մը, այո, սակայն այնպիսի անձնաւորութեամբ, որ իր պակասը, իր թերութիւնը և իր հոգեկան պարապութիւնը լեցնէ:

Աստուած այնքա՛ն սիրած էր Իր արարչագործութեան կատարը (Ադամը), որ փոխանակ գրկելու զայն իր բաղձանքէն, Ինք եւս կամեցաւ, ըստ Ադամի տեսչանքին, շնորհել անոր նաեւ իր երազը: Աստուած ո՛չ հողէ ջինեց կինը և ոչ ալ ուրիշ կենդանիներէն, այլ ուղղակի Ադամէն: Եւայի այ՛ս ստեղծագործ կառուցման մէջ կը տեսնենք՝ **"ամուսնական խորհուրդը"**: Ամուսնութիւնը՝ իր գերագոյն աստիճանին (պատուանդանին) վրայ՝ **Խորհուրդ է**:

Ամուսնութիւն մը կրնայ բազմաթիւ հանգամանքներ ունենալ: Ինչպէս այր ու կնոջ համաձայն կենակցութիւն որպէս լուծում մարմնական դժուարութեանց կամ որպէս հեշտութիւն: Սակայն որպէս գերագոյն և վեհագոյն

վիճակածեւ, "ամուսնութիւնը" մեզ կը ներկայանայ որպէս աստուածային միջամտութիւն: Տեսնել և գտնել զա՛յն, որ մեր ինքնութենէն ու մեր անձնաւորութենէն է ան: Աշխարհի վրայ շատ դժուար գտանելի և լուծելի հարցեր կան: Ամուսնութիւնը, սոյն հարցերուն մեծագոյնը կը հանդիսանայ: Այս է գլխաւոր պատճառը որ միլիոնատերներ կ'ամուսնանան բազմաթիւ անգամներ, և կրկին կը ձախողին: Իրենց դրամով և իրենց իմաստութեամբը կը ձախողին գտնել իրենց երազածը: Որովհետեւ մարդիկ իրենց երազածը, իրե՛նց ձեռքով կ'ուզեն ջինել, փոխանակ խնդրելու զայն Աստուծմէ:

Աստուած Բնացուց Ադամը որպէսզի անոր երազին իրականութիւն շնորհէ: Աստուած բաւ սեպեց Ադամին երազանքն ու հոգեկան որոնումները: Հասած էր ժամը որ Ադամին երեւակայութեան կերպարը մարմնանայ: Հաճոյակատար և սիրահամբոյր նպատակի մը համար՝ Աստուած Բուն տուաւ Ադամին: Ինչպէս Աստուած՝ ի՛ր ինքնութենէն ճառագայթ մը տուած էր Ադամին, նոյնպէս ալ Ադամի ինքնութենէն առաւ ճառագայթ մը: Առաւ Ադամին այնպիսի մասէն որ ան չկորսնցնէ իր հաւասարակշռութիւնը (կողէն): Ադամին կենարար ճառագայթով՝ Աստուած ջինեց նաեւ Եւան:

Ադամի երազային մահառումները և հոգեկան տենչանքը դադրած էին շարունակուիլ որպէս երազ, ու դարձան շօշափելի ու թանձրացեալ մարմին և ոսկոր: Աստուծոյ ներկայութիւնը երբ որպէս զեփիւռ փայփայեց Ադամը, Ադամ արթնցաւ ու դէմ յանդիման գտաւ զայն՝ ինչ որ կը կարծէր տեսած ըլլալ որպէս ցնորք մը միայն երազներու աշխարհին մէջ: Սկսեալ այն օրէն, մարդ երբեմն կը շփոթի թէ իրապէ՞ս կ'ապրի, թէ կեանքը երազ մըն է:

Ինչպէ՞ս ուղիղ առաջնորդուիլ ամուսնութեան մէջ:

Յաջող ամուսնութեան մը համար, շօշափելի և ուրուագծուած ճամբայ չի կայ: Մարդկային կեանքը ճամբորդութիւն մըն է ոչ ցամաքի և ոչ ալ թանձրացեալ մարմինի վրայ: Մարդկային ապրումը հոգեկա՛ն ուղեւորութիւն մըն է և անոր ուղեցոյցը երկնակամարի աստղազարդ ճառագայթներով կ'ըմբռնուի: Այդ է պատճառը որ Բիչեր յաջող և նպաստաւոր արդիւնքի կը հասնին: Մարդոց մեծամասնութիւնը կը տարուքերի ժամանակաւոր ամուսնութիւններով, անցաւոր կենակցութեամբ կամ իրենք զիրենք անձնատուր ընելով ցոփութեան և անփութութեան:

Ամուսնութեան խորհուրդն ու սրբութիւնը կը պատկանի հերոսամարտ դիւցազուններու, որոնց համար աստեղազարդ երկինքը բաց Բարտէս մըն է: Ամուսնութեան մասին մտածելը, ոչ թէ չափահասութեան հասնելէ վերջ տեղի ունենալու է, այլ մինչեւ **հասնի՛լը** չափահասութեան: Յաջող ամուսնութիւն մը կեանքի ամենակարեւոր հանգրուաններէն մին է կամ գերագոյնը: Որուն պատրաստութիւնն ու նախապատրաստութիւնը սկսելու է շատ կանուխ: Աստուածատես և ոչ անձնասիրական աչքերով փնտռելու է անձ մը՝ իր գոյգը, ան հովի նման անցորդ մըն է, որ կարծես կը խուսափի մեր աչքերէն:

Փնտրողի մը գլխաւոր պայմանը ըլլալու է, թէ ի՞նչ օգնութիւն և օժանդակութիւն կրնայ բերել այն հոգիին, որ ան ալ նման իրեն, զինք կը փնտռէ: Ներկայիս, դժբախտաբար, սոյն օգնութիւնն ու օժանդակութիւնը փոխարինուած է ընչափադուրստեամբ, այլ խօսքով, անգէտ և դեռատի չափահասներ և տարեցներ կը փնտռեն իրենց զոյգերը ոչ թէ բան մը **տալու**, այլ՝ բան մը **տոնելու**, չ'ըսեմ բան մը կորզելու նպատակաւ: Երբ ձախողի իրենց ամուսնութիւնը, փոխանակ իրենք իրենց մէջ փնտռելու պատճառը, կը փնտռեն դիմացիինն մէջ:

Աստեղագարդ երկնակամարի ճառագայթներէն միակ Մարդեղացողը եղած է Յիսուս Զրիստոս: Ծառեր կը սիրեն, կը պաշտեն և կը դաւանին Զինք, սակայն **Բիչեր** կը կատարեն Իր պատուիրանները: Երկնառափ Առաքեալը՝ Յիսուս, բացայայտօրէն պատուիրած էր, «սիրէ՛ք բոլոր ընկերդ բո՛ւ անձիդ պէս», և ոչ թէ «սիրէ՛ք բոլոր ընկերդ զինք՝ **օգտագործելու** կամ **շահագործելու** համար»:

Տիեզերքի միակ վառելանիւթը որ սպառելով կ'աւելնայ՝ **սէ՛րն** է: Ան որ չի՛ հաւատար սոյն հրաշագործութեան, չի՛ հաւատար որովհետեւ չէ փորձած:

Աստուած՝ Մէր է ու տակաւին անսպառ:

Մեղտ. 6, 1990

Ֆլորէնս, Իտալիա

ԽԱՌՆԱՇՓՈՐ ԴԻՒՐԻՄԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Բառագիտութիւնը այն գեղարուեստն է, որուն միջոցաւ լեզուաբան մասնագէտը, գիրերու կազմութեամբ և անոնց նշանակութեամբ կրնայ բացատրել բառի մը արմատական ծագումն ու յայտնաբերած իմաստը: Մարդկային մտքին մէջ մթերուած բառերու իւրաքանչիւր ճոխ հաւաքածոն՝ ունի իր ակնադիւրը կամ սկզբնապատճառը: Ինչպէս *“բառ”* մը առանց մարմնացեալ *թանձրութեան* չգոյանար, նոյնպէս բառերը կը ստանան իրենց գոյացութիւնը, որովհետեւ գիրենք գոյացնող իրականութիւններ, իսկութիւններ և դէպքեր իսկական իրողութիւններ, ճշմարտութիւններ և իրագործուած փորձառութիւններ են:

Օրինակ, երբ կ'ըսենք խնձոր, այդ "խնձոր" բառին ետեւ գոյութիւն ունի խնձորենին: Երբ ըսենք խնդութիւն, այդ "խնդութիւն" բառին ետեւ կան ուրախութիւն, հրճուանք և ցնծութիւն: Երբ կը գրենք "յաջողութիւն" բառը՝ մեր խորհուրդներուն մէջ կը պատկերի ձեռք բերուած իրագործութիւնը, յամառ աշխատանքով ձեռնարկութեան մը բարի վախճանը: Երբ գործածենք "սիրելի" բառը, յայտնած կ'ըլլանք մեր ներմարմնային զգացումներու ցոլացումը անձի մը հանդէպ: Ձեռք կրնար սիրել անձ մը, առարկայ մը կամ մտայնացում մը որ **անգոյ** է:

Գրագրութեամբ և խօսակցութեամբ կը նկարագրենք ա՛յն ինչ որ տեսած ենք, շօշափած ենք և փորձառական ճանաչողութիւն մը ունինք, ըլլայ այդ ճանաչելին նիւթապէս, կամ հոգեպէս: Երբ անձի մը, անգլիացիի մակդիր տանք, այդ անձը նոյնացուցած կ'ըլլանք Անգլիոյ ժողովուրդին: Երբ կ'ըսենք հայ, այդ անձը բնորոշած կ'ըլլանք հայ ազգի զաւակներուն հետ: Իսկ երբ ըսենք "Ամերիկացի", հոն կը հանդիպինք խրթին և դժուարալոյծ պայմաններու: Որովհետեւ Ամերիկա, ըլլալով ազգերու խառնարան մը, բոլոր ազգերն ու ցեղերը իրաւունք ունին կոչուելու Ամերիկացի:

Ներկայ կարգ մը հեղինակաւոր գիտնականներ կը ջանան նաեւ հարազատ և անաղարտ բառերը աղարտել և դարձնել զանոնք խառնածին և քանի մը իմաստներէ և նշանակութիւններէ կազմակերպուած խառնաշրջանակութիւն:

Միթէ կարելի՞ է խնձորի մը տալ վարունգի նկարագրութիւնը, համը և արժէքը, որովհետեւ երկուքն ալ *կանաչ* են: Կրնա՞նք որդի մը և օձի մը նոյն իմաստը տալ, որովհետեւ երկուքն ալ *տղու* է են: Ազա՞տ ենք անչափահասները շփոթեցնել օթոյի և սաւառնակի հետ, որովհետեւ երկուքն ալ ջարժակ (մոթոր) ունին:

Ինչո՞ւ հոգեկան ոլորտի ուսումնասիրութիւնը, որ կը բննէ և կը մատնանշէ ոգեկան խորածածուկ խորհուրդները ներհայեցողութեամբ և

թափանցողութեամբ՝ յանձնել և վստահիլ մարդապաշտ (humanist) մտաւորականներու, որոնք հրապարակ կու գան որպէս *“հոգեբաններ”* (psychologist): Անձեր, որոնք իբր հոգեբան “հոգի” բառը աղարտած ու անոր վերագրած են “հոգի” բառէն բոլորովին տարբեր և խորթ իմաստ մը:

Ժողովուրդները այսօր կ’ապրին դարու մը մէջ, ուր ամէն բան *ժայտա* է, ուտելիք, հագուելիք, ընտանեկան առափնութիւններ և ազգային ու դատական օրէնսդրութիւն և մանաւանդ կրօնի և հաւատքի սրբութիւնները: Ինչպէս որ դժուարացած է զատորոշել *“Ամերիկացի”* մը՝ չինացիէն, ճաբոնցիէն, անգլիացիէն, ֆրանսացիէն և արաբէն, որովհետեւ բոլորն ալ ամերիկեան անձնագրեր ունին, նոյնպէս ալ գիտութեան ակադեմիան դարձած է խառնարան ուր բառերը կորսնցուցած են իրենց վճիտ իմաստն ու յստակ խորհուրդները: Հարիւրաւոր տարիներէ ի վեր “german shepherd” ջունն ու “արաբական ձիւ” կը ծնին ու կը բազմանան Ամերիկայի մէջ, ու կը կոչուին իրենց երկրին (քնիկ հայրենիքին) անունով: Բայց մարդը, ո՛չ...:

Համալսարաններէ ներս կ’աւանդուի «հոգեբանութիւն» կոչուած բնաբան նիւթը, ուր անչափահաս մտերու մէջ “հոգի” բառը կը ներկայացուի իր ինքնութենէն և հանգամանքէն բոլորովին տարբեր անհարազատ գոյացութիւն մը: Նման ահաբեկիչ ազգայնամոլի մը, որ կը կրէ բազմաթիւ անցագրեր իր քաղաքացիութենէն զատ: Ինչպէս մաքսատան պաշտօնեաներու համար այսօր, թնճուկ մըն է ծանչնալ ո՞վ ինչ ազգի պատկանիլը, նոյնպէս մարդիկ կորսնցուցած են իմաստը հոգիի և մտքի, բարիի և չարի, կեղծի և իրականի իսկութիւնը: Նիւթականը կրնայ *յարաբերական*, ըլլալ բայց ո՛չ երբեք բարոյական սկզբունքները:

Չակերտուած հոգեբաններ՝ հաւատքի առափնութիւնները վերածած են շուկայիկ ապրանքի ուր անոնց արժէքը կ’իմաստաւորուի առուծախի վաճառքով՝ *յարաբերական* իմաստով: Ո՛ւր և ե՞րբ ենթակայի մը ազատութիւն տրուած է իր քաղաքացիական և քրտական մղումներով արժեւորել ընտանեկան, ազգային ու կրօնական առափնութիւններն ու սրբութիւնները առանց խղճահարութեան:

Ինչո՞ւ լուծ է մարգարէաշունչ հոգեւորականներու ձայնը և փակուած տեսանող կղերականութեան աչքերը: Ո՛ւր է խիզախ Ղեւոնդեան դասը, որ պիտի առաջնորդէ Հայ նոր սերունդը արդի մտաւորական խաւար և չակերտուած **“լուսազարթնումէ”** դէպի իրական և ճշմարիտ **Լոյսը**:

Ինչպէս խաղող բառին ետեւ կայ որթատունկը և արմաւ բառին ետեւ արմաւենին, նոյնպէս ալ հոգի բառին ետեւ կայ Սուրբ Հոգին. և աստուած բառին ետեւ՝ Աստուած Ճշմարիտը:

Դեկտ. 1, 1992

Թորոնթօ

ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒՎ

Քսաներորդ դարու ընդհանրացած և օրինականացած ամուսնալուծումի կիրարկումները կ'առաջնորդեն անհատը, ընտանիքը և ազգը դեպի ընկերային բայթայում և անձնասպանութիւն: Պատճա՞ռը:

Որովհետեւ մարդ արարած, իր մարմնական կազմութեամբ թէեւ նման է անասնակա՛ն աշխարհին, սակայն իր հոգեկան ու իմացական՝ գերբնակա՛ն զգայնութեամբ ջերմ աղերս ունի հանդէպ խորհրդաւորութեան և հաճելի կամ տխուր անմոռանալի տպաւորութիւններու, որոնք կը դրոշմուին իր մտքին, իր զգայնութեան և երեւակայութեան վրայ: Գիտակա՛ն ջօջափելի ճշմարտութիւնները կ'ուղղուի միայն մտքին: Հոգեկա՛ն՝ աննիւթական, ներանձնական ապրումներն ու կարօտաբաղձ զգայնութիւնները կը կերտուին ու կը կառուցուին ամուսնական խորհուրդին մէջ, ուր այր և կին կը հոգեխառնուին ոչ միայն մարմնակա՛ն սերնդագործութեամբ, այլ նաեւ աստուածադիր հոգեկա՛ն, բարոյակա՛ն և բարենորոգման բխումներու ճամբով:

Ամուսնութիւնը նման է մետաղաձուլումի և կառուցումի ընթացքին գործածուած խառնուրդին, որոնք կը բաղկանան զանազան տարրերէ կամ մասնիկներէ: Հնչուն զանգակ մը իր մելանուշ դօղանչով կը հրաւիրէ հաւատացեալները աղօթատուն: Այդ զանգակին գլխաւոր խառնուրդը կը բաղկանայ պղինձէ ու անագէ: Տաճարի մը կառուցման համար գործածուած շաղախը կը բաղկանայ կրափոշիէ (cement), խճաքարէ և աւազէ:

Միթէ չ'արժեր մտածել, թէ ի՞նչ կրնայ պատահիլ եթէ հոգեւորով զանգակին պղինձը բաժնել ջանանք անագէն, կամ կառոյցի մը շաղախը անջատենք իր բաղկացուցիչ տարրերէն... :

Եթէ յիմարաբար, տիմարօրէն կամ անմտօրէն փորձենք կառուցուածքի մը նիւթական բաղադրութիւնը, անոր բաղկացուցիչ տարրերը, բաժնե՛լ իրարմէ, կ'ունենանք մի միայն բայթայում, կոտորած և ոչնչութիւն: Ո՛չ զանգակը երկուքի կը կիսուի ու ո՛չ ալ տաճարը երկու փոքրիկ կառուցուածքներու կը վերածուի, այլ՝ **չգոյութեան...**: Այս պատճառով և իրատեսութեամբ, ամուսնական բաժանումը, համեստօրէն, պիտի կոչեմ ինքնաբայթայում, որովհետեւ հետեւանքը վճռականօրէն կործանում է:

Ջախորդ ամուսնութեան մը ճարն ու դարմանը ամուսնալուծում չէ ու ոչ ալ մեկուսանալ: Դիմացինը բննադատելն ու յանդիմանելը դժգոհի՛ արտայայտութիւն է միայն, որ դրական ոչինչ կը մատուցանէ: Ջախողանքը *պարտութիւն* է մը չէ՛, այլ ապացոյցն է սիրոյ գործադրումի և կատարումի: Դժբախտաբար, բնութեան մէջ ուժեր կան, որոնց վրայ իջիւելու կարողութիւնը չունի մարդ արարած: Սակայն ամէն դժբախտութիւն բնութեան ուժերու հետեւանքը չէ՛, այլ մարդկային ազահութեան, անձնասիրութեան և

հայարտութեա՛ն, արդիւնք: Օրինակ, դժբախտ են ֆիզիքական աչքերով կոյր եղողները--աւելի դժբախտ են մտքով կոյրերը, որոնք անփոյթ կերպով կը դանդաղին մտաւոր կուրութեան լաբիւրինթոսներուն մէջ:

Դժբախտութեան և ձախողութեան պատասխանատուն ընդհանրապէս, մարդը ի՛նքն է: Ինչպէս մարդ՝ իր ըսած խօսքը կամ արտայայտած մէկ գաղափարը յամառօրէն կը պաշտպանէ ու կը հետապնդէ մինչեւ որ յաջողցնէ զայն, նոյնպէս ալ ձախող ամուսնութիւն մը և դժբախտ կենակցութիւն մը կրնայ դարմանուիլ ու դառնալ *դրօշման*: Եթէ ենթական պատրաստ է ընելու պահանջեալ զիջումներն ու զոհողութիւնները: Եթէ կողմերէն մին իր սրտին մէջ ունի սիրոյ կայծը, հոգ չէ որ անթեղուած ըլլայ ան: Ինչպէս որ տաճարները չես կրնար անջատել կրակէն, նոյնպէս ալ սէրը չես կրնար դագաղի մէջ պահել, Սէրը անպատճառ յարութիւն կ’առնէ: Ամէն անգամ երբ փչէ սիրոյ հովը, ամէն անգամ որ կողմերէն մին յիշէ իր անցեալի սիրոյ պահերը, անթեղուած կրակը կրկին կը բոցավառի:

Այնպէս ինչպէս իմաստուն առեւտրական մը, որ կրկին ու կրկին անգամներ փորձած ու ձախողած է բայց չի դադրիր *կրկի՛ն* փորձելէ: Նիւթականի համար երբ մարդ ա՛յս աստիճան յամառօրէն կը փորձէ, ինչո՞ւ ամուսնութեան մէջ ձախողածներ չեն ուզեր **կրկի՛ն** փորձել... :

Կան պարագաներ ուր ամուսնութիւնը իր սաղմնային վիճակին մէջ հիմնուած է արդէն ջահու կամ անձնասիրութեան վրայ ու ո՛չ *փոյնտդա՛րձ* սիրոյ: Կան արտակարգ պարագաներ եւս, ուր կենակիցներէն մին կը հրապուրուի իր ամուսինէն (այր կամ կին) տարբեր անձէ մը:

Թէեւ պարագաներու անակնկալ պայմաններովը կը բնորոշուի անձի մը առնելիք ուղղութիւնը կամ ամուսնութեան մը ընթացքը, սակայն լաւատեսութեամբ ու անձնագոհութեամբ կարելի է ամենադժիւժ ամուսնութիւն մը փրկել ու զայն վերադարձնել երջանկութեան, եթէ կողմերը ունին հաւատք, նուիրում և անթեղուած կրակը բոցավառելու անձնագոհութիւնը և պատրաստակամութիւնը:

Ինչո՞ւ ամուսնութիւն մը պարտի վերականգնիլ ու ո՛չ վերամուսնութիւն կնքել:

Ամուսնալուծումը, երջանկութեան *կարծ* և կտրուկ ճամբան չէ՛: Ամուսնալուծումը անել կացութիւն մը չի՛ փրկեր այլ զայն կը բարդացնէ ու կը վերածէ ա՛լ աւելի խառնակ հանգոյցի մը:

Ամուսնալուծումը, անխառն ուրախութեան և բարօրութեան բանալի մը չէ՛: Որովհետեւ մարդ արարած անբան և անանձնական կենդանի մը չէ: Ան աշխարհ մըն է և ինքնատիպ պատմութիւն մը և անոր հոգին՝ տիեզերքի աննիւթական ենթանիւթն է: Մարդ իր անձին մէջ կը կրէ իր նախնիներու աներեւոյթ հոգիները ու նաեւ իր սիրած կամ չսիրած կենակիցին հոգին: Ան կրնայ բաժնուիլ իր կենակիցին *մարմինէն* ամուսնալուծութեամբ, բայց ո՛չ

անոր հոգիէն, գիտակցութենէն և ոգեկոչումէն:

Գծքախտ ամուսնութիւն մը կը նմանի ծովամոյն ըլլալի՜ք նաև ու մը, որմէ խոյս տալը լաւագոյն և կարճ ճամբան կը կարծուի ըլլալ: Մակայն ոչ: Նաէն հեռանալով դասալիք ըլլալը, ենթական չ'ապահովագրեր որ ան անպատճառ ցամաք կրնայ հասնիլ: Լաւագոյն, սակայն *դժուարի'ն* ճամբան, նա'ւը բարւոճել է, նորոգել կամ դարմանել է, *երկրաբի'ն* փրկութեան համար: *Իսկ ի'ր անձին* փրկութիւնը մտածել, *անձ նասիրութիւն* է, «Ես»ին խորանին պաշտամունքը: Միաբանութիւնը՝ սիրոյ ստեղծագործութիւնն է, իսկ պառակտումը անձնասիրութեան և փառասիրութեան արդիւնքն է: Ներկայ 20-րդ դարու հոգեբանութեան մէջ սիրապետող հոգին ***անձնասիրութիւնն*** է, որ աւելի վտանգաւոր է քան որեւէ սպաննացող չարիք: Կեանքէն փախուստ տալը անձնասպանութիւն է, իսկ զայն *բաբառնելը*՝ հերոսութիւն: Անձնատերներ, դիւրակեցութիւնը նախընտրողներ և փառամուկներ *չքննէ* անձնագոհութեան հոգին, այլ անոր փոխարէն ունին *հաշիւ*: Իսկ Զրիստոս ունի բարոյական անձնատուութիւն առանց հաշիւի: Յիսուս Զրիստոս'ով մարդ կը գիտակցի թէ ինք կոյր պատահականութեան կամ դիպուածի մը արդիւնքն է՝, այլ՝ անհուն սիրոյ ու Գերբնական Ծրագրի մը իմաստալից արարչագործութիւնը:

Ո՞ր ծնողքը իր հաշմանդամ կամ արկածեալ զաւակը կը սպաննէ, որովհետեւ աւելի *դիւրին* է ուրիշ առողջ և առոյգ զաւակ մը ունենալը քան թէ դարմանել արկածեալը և պակասաւորը: Գտնուած են ծնողքներ, որոնք իրենց բոլոր ունեցածը ծախսած են բժշկելու իրենց արկածեալ զաւակը: Ինչո՞ւ, որովհետեւ մարդ գոյացութիւնն է և թանձրացեալ շօշափելի էակը Աստուծոյ հանճարեղ խորհրդածութեան և սիրո՞յ արդիւնաբերութեան: Արարիչ Աստուած կրնար կորսնցնել Ադամն ու Եւան ու նոր մարդ մը ստեղծել: Մակայն, Ան սիրած էր Իր *անցյալնիկ* արարչագործութիւնը, ուստի ջանաց և կը ջանայ ցարդ, փրկել ու յաւերժացնել զայն: Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ Իր Միածին Որդին դրկեց որ փրկէ մարդ էակը, վերադարձնէ զայն դէպի տուն, սրբութիւն, կեանք և դէպի ժառանգութիւն:

Ամուսնալուծման գլխաւոր պատճառը, չեմ համարձակիր ըսել միակ պատրուակը, *չսիրե'լ է* կամ սիրելէ դադարիլն է: Ուստի ո՞վ կ'ապահովէ, որ *երկրորդ ամուսնութեամբ* ենթական կրկին պիտի չդադրի իր սիրած կենակիցը սիրելէ: Երբ անձ մը դադրի իր կենակիցը սիրելէ, յաճախ սիրոյ երածջութիւնը ի՞ր թերութիւնն է ու ո՞չ դիմացիներ: Ճշմարիտ ու անձնագոհ սէր մը չի՛ մարիր, որովհետեւ սէրը սպառելով կը դառնայ անսպառ ու չգործածուելով ալ կը չորնայ: Զօրագոյն սէրը անձնուիրութիւնն է, ո՞չ խոժոռադեմ, այլ բարեհամբոյր սէրը:

Ինչպէ՞ս բարելուել ընկղմելու

մօտ եղող կենակցութիւն մը:

Զրիստոնեայի մը համար ամուսնութիւնը *խորհուրդ* է, ըլլալով հան-

դերձ սեռային ու ֆիզիքական զանազան հանգամանքներ: Ան արտաֆին՝ ջօջափեղի և զգալի նշանն է, որուն միջոցաւ տեսանելի ձեւերու տակ անտեսանելի շնորհները կը ստացուին: Մեծ սրբապղծութիւն է խորհուրդի մը խորհրդագեղծումը: Ամուսնութեան սերն ու անփակտելի կապը իր զօրութիւններով ու հոգեկան ներգործութիւններով հանդերձ, դիւրաբեկ ապակիի նման տկար է, անզգոյշ խօսքով կամ արտայայտութեամբ մը կը փշրուի: Պէտք է այդպէս ըլլայ, սակայն է: Ինչպէս Յարութեան խորհուրդէն կը ծնի տեսիլքը յախտնական կեանքին, նոյնպէս ալ ամուսնութենէն կը ծագի միասնական ստեղծագործութիւնն ու համակենսակցութեան սրբազան երածջութիւնը:

Կործանած հրաշակերտ տաճար մը կարելի է վերակառուցանել: Երկրաշարժէ քանդուած պալատ մը կարելի է անելի գեղեցկօրէն վերականգնել, սակայն ինչպէ՞ս վերարծարծել ջախջախուած սեր մը: Զրիստոս խոստացաւ ու վստահեցուց Իր հետեւորդները, թէ Ինք ջախջախուած եղէգը (մարդ արարածը) պիտի չփշրէ և անկայծ պատրոյգը պիտի չմարէ: Մակերեսային զգացումները և տպաւորութիւնները չեն որ կը լուսաւորեն իրերու և երեւոյթներու հասկացողութեան խորքը, այլ հաւատքի ջահն ու Հոգիի՝ լուսաւորումը:

Դիմացինը ամբողջական ջախջախումի ենթարկելէն առաջ, իրաւունք ունենալ կարծող կողմը, պարտ է որ ջանայ բարելաւել ու փրկել ամուսնութեան մակոյկը: Ինչպէս հիւանդանոցի մը մէջ բժիշկները կը ջանան բուժել հիւանդը որքան ժամանակ, որ ան ողջ է, սակայն երբ մեռնի, զայն կը փոխադրեն դիագնոսարան: Նոյնպէս ալ հաւատացեալ զոյգեր որքան ալ թերի ըլլան իրենց կենցաղավարութեան մէջ, որովհետեւ ամուսնացած են եկեղեցւոյ մէջ և ուխտած ցմահ հաւատարիմ մնալ և զիրար սիրել, պարտ են փորձել իրենց միասնականութիւնը ու ոչ թէ հիւանդ վիճակով դիագնոսարան տարուիլ... :

Ինչպէս կաթնածեղ և սրտի տագնապէ վերջ, հիւանդը եթէ ուզէ ապրիլ, կրնա՛յ կազդուրուիլ, նոյնպէս ալ ամուսնութեան և սիրոյ տագնապէ մը յետոյ, կենսակիցներ եթէ ուզեն, ճաշակել երջանկութեան *փոխառաջը* ուրախութիւնը, կրնան իրենց անխառն երանութիւնը վերագտնել և իրականացնել: Ֆիզիքական տագնապէ մը վերջ, ենթական կակազելով կամ մեծ դժուարութեամբ կը խօսի, կը բալէ ու ջարժուձեւեր կ'ընէ: Կան հիւանդներ, որոնք ֆիզիքական կամ հոգեկան տագնապէ մը յետոյ կը նախընտրեն մեռնիլ քան թէ ապրիլ:

Տանդէի բերթուածին մէջ, Դժոխքի դրան ճակատին գրուած է. *«Թողէ՛ք որեւէ յոյս՝ դուք որ մտնում էք»*: Յոռետեսութիւնը մեղամաղձութեան բոյրն է: Մինչդեռ հաւատք՝, յոյս և սեր իրենց մէջ կը կրեն վերընձիւղելու ու վերակենդանալու զօրոյթն ու կամքը: Հաւատացեալ մը որքան ալ անցնի տագնապներէ և սայթափումներէ, անոր համար «յոյս»ը՝ կենդանի

Անձնաւորութիւն մըն է՝ Լուսաւոր Յիսուս Զրիստոս մեր Լոյսը ու մեր Կեանքը: Ուստի դիմենք դէպի կեանք, դէպի Լոյս Առաւօտ՝ հաւատով և լաւատեսութեամբ:

Ամուսնութեան տագնապը յարթահարելու առաջին քայլը, ձեռներու հպումով սկսիլն է: Յիսուս Զրիստոսի գորովագին ու փափկասիրտ Ձեռները դեղ ու դարման եղան մեղաւորներու ու հիւանդներու: Նոյնպէս տաճակ և *Տաղորդիչ* ձեռներու շոյանքը, փայփայանքն ու գգուանքը յարութիւն կու տան անշարժութեան մատնուած սիրոյ և յուսահատ հոգիներու:

Երկրորդ քայլը, խօսակցութեան ընթացքին դնել է մեր ձեռները մեր կենակիցին ուսերուն, շոյել անոր մտաբանափայլ մագերը և ժպտադէմ ու երազուն աչքերով նայիլ իր ծով աչքերուն մինչեւ որ հասնինք սրտի՝ աչքին, որովհետեւ կնոջ մը հզօրագոյն կախարդանքը անոր աչքերուն մէջն է: Երբ երկու հայեացքները աչքերու ընդմէջէն հասնին սրտի և հոգիի աչքերուն, կուտակուած զգացումները, **սխալ կամ ճիշտ**, դուրս կը թափին ջրթներէ և աչքերէ ու վրիժավառ աչքերը կը վերածուին սիրավառ ու յուզումնավառ աչքերու:

Տեսնե՛լ միայն, արտաքին կերպարանքին նայիլ չէ՛: Տեսնե՛լ մարմնական աչքով ակնարկ մը նետել չէ՛, այլ աննախապաշար մտքով ու անկեղծ հոգիով ներթափանցել, ըմբռնել և ճանչնա՛լ է առարկան կամ *անձնաւորութիւնը*: Տեսողութիւնը միայն մարմնական աչքով չէ, այլ *հոգիին և սրտին* տեսանելիութեամբ: Աչքով տեսանելիութիւնը իր սահմանաւոր ջրջանակը ունի: Դիմացիւնը երբ մտքով տեսնուի՝ ենթակային հորիզոնը շատ աւելի կ'ընդարձակուի: Իսկ երբ *հոգիով* տեսնենք մեր կենակիցը՝ ոչ հորիզոն կ'ունենայ ան և ո՛չ սահմանում, այլ տեսողութեան թոփչքը կը տեսնէ թէ՛ ժամանակի և թէ՛ միջոցի անհունութիւնը ու միասնականութիւնը կը դառնայ յաւերժութեան երաժշտութիւնը:

Այն ատեն երկինքի աստղերը լուսածալիտ պիտի շողան վերականգնած ամուսնութեան վերեւ ու Յարուցեալ Փրկիչը լուսածնունդ ներգործութեամբ պիտի առաջնորդէ զիրենք նոր յարթութիւններու: Լոյսին դիմաց խաւարը խոյս կու տայ ու կը փախչի: Սիրոյ դիմաց անհասկացողութիւնը և դառնութիւնը կը ցնդին ու կ'անյայտանան: Սիրոյ Լուսաբացին երբ իրարու հանդիպին, նոյնիսկ երկու ներհակ հոգիներ, տխուր անցեալը կը մոռցուի Լուսահաղորդ Զրիստոսի կենսապարգեւ ներկայութեան:

**Յունուար 30, 1995,
Թորոնթօ**

ՄՐԲԱԶԱՆ ՈՒՒՏԸ

«Ուխտ» բառը անմիջապես մեզի կը պատկերացնէ ժողովուրդներու խմբական երթը, որ ուխտագնացութեան ճանապարհին մէջ են դէպի Երուսաղէմ կամ տարբեր սրբավայրեր: Ուխտաւոր մը, ներկայիս կրնայ 24 ժամուան մէջ աշխարհի ամենահեռաւոր ուխտավայրը հասնիլ օդանաւերու հանգստաւետ թռիչքով: Ֆիզիքական և հոգեկան այսպիսի դիւրակեցութեամբ, ուխտատեղի հասնիլը ոչ թէ ուխտի երթալ կը նշանակէ, այլ զբօսնուլ, հաճոյքի կամ զարգացման նպատակաւ օտար երկիրներ շրջիլ և գուարճանալ:

Անցեալին՝ իրական ուխտաւորներ երբ Աստուծոյ ուխտ մը կատարէին, իրենց արժանապատուութիւնը և էութիւնը կը դնէին այդ խոստումին մէջ: Ուխտագնացութիւնը՝ անձնագոհութիւն և անձնուրացութիւն պահանջող արկածալից ուղեւորութիւն մըն էր: Ուխտաւորներէն ջատեր, *երկրորդակա՛ն*, ուխտ մը եւս կը կատարէին, որ եթէ ողջ առողջ վերադառնան, այսինչ նուիրատուութիւնը կամ ծառայութիւնը պիտի ընեն Աստուծոյ: Ծաբաթներ և ամիսներ կը տեւէր ուխտագնացութիւն մը դէպի Երուսաղէմ կամ Ս. Էջմիածին:

Ուխտագնացութիւնը կը կատարուէր ծովապահութեամբ և ապաշխարութեամբ (կամաւոր անձնուրացութեամբ): Հեռուներէն երբ կը նշմարուէր սուրբ ուխտատեղին, երկրպագութեամբ, ծնրադրութեամբ և աղօթքով կ'ուղղուէին դէպի սրբութիւն և լրումը իրենց ուխտադրութեան:

Հնագոյն անցեալի բազմահազար ուխտաւորները չկան այսօր, որոնք հետիոտն կը քալէին լեռներու, կիրճերու և ձորերու մէջէն հասնելու համար իրենց սրբազան ուխտի հանգրուանը՝ խոր հաւատքի սուրբ խորանին և նուիրելու իրենց սերն ու հաւատարմութիւնը Աստուծոյ:

Առանց ստորագնահատելու բացարիկ փոքրամասնութիւն մը ճշմարիտ ուխտաւորներու, ներկայ ուխտաւոր համարուածներու մեծամասնութիւնը զբօսաշրջիկներ են, որոնք փոխանակ աղօթելու և ապաշխարելու սոյն եկեղեցիներու և սրբատեղիներու մէջ, կը Բննադատեն անոնց շինութիւնը կամ կարգն ու կանոնը, որովհետեւ համապատասխան չեն գտներ անոնց տուած հանգստութիւնը արեւմտեան ճոխութեան և սփոփանքին:

Այսօր ալ կան հազարաւոր և նոյնիսկ միլիոնաւոր ուխտագնացներ, սակայն անոնց դիմագիծերուն ուխտի յատկանիշները և ընդհանուր կերպարանքը կը տարբերի անցեալի հաւատաւոր ուխտաւորներէն: Արդի ուխտ ընողներն ալ կ'ուղղուին դէպի սրբատեղիներ ու եկեղեցիներ, սակայն իրենց որոջած և ճաջակին համապատասխան եկեղեցի մը: Այս ուխտաւորներու մեծամասնութիւնը կազմուած է երիտասարդ գոյգերէ և մաս մըն ալ տարեցներէ կամ երկրորդ անգամ ուխտել փափաքողներէ:

Ինչպէս վերեւ յիշած էինք, ասոնց կերպարանքը, դէմքերու արտայայտութիւնը և զգեստաւորումը բոլորովին կը տարբերի անցեալի դասական

ուխտագնացներէն: Ասոնց ուխտագնացութիւնը, նախ եկեղեցի է, յետոյ կերու-
խում, իրախճանութիւն և անկէ ետք հազարաւոր մղոն հեռու գքօսավայր մը:

Վերոյիջեալ բոլոր արարողութիւններուն և ձեւակերպութիւններուն,
որեւէ առարկութիւն չկայ և հակաճառութիւնն ալ անտեղի է: Միայն կ'ուզեմ
շեշտել, որ Ս. Եկեղեցիի, և հանրութեան ներկայութեան կատարուած
սրբազան ուխտը՝ պարզ տղայական կատակ մը չէ և ոչ ալ զաւեշտ սեպելու է:
Անցեալին՝ հաւատացեալներ, երբ ուխտ ընէին, ծումապահութեան և
ուխտագնացութեան, իրենց ուխտը կը կատարուէր Աստուծոյ և իրենց միջեւ:
Այս ուխտաւորներէն շատ փոքր մաս մը չէին կրնար լրացնել իրենց ուխտը,
հիւանդութեան, արկածի կամ ընտանեկան պարագայի մը մահուան պատճառա-
ւու կը վերադառնային տուն:

Այս գրութիւնը դատապարտութիւն մը չէ, այլ հարցում մըն է:
Ինչո՞ւ համար սրբազան ուխտի (ամուսնութեան) խնդրարկուներ, կէս կը ձգեն
իրենց սրբազան ուխտագնացութիւնը այսօր, մանաւանդ երբ պարգեւատրուած
են յաւելեալ անդամով (զաւակով) մը, որ **ցկեանս** իրենց խնամքին կը
կարօտի: Եթէ ուխտադրուածներու թիւը փոքր ըլլար, թերեւս մեր նկատողու-
թենէն վրիպէր անոնց թերացումը: Մակայն ուխտագնաց թեկնածուներու
թիւը սկսած է հաւասարիչ հաւատարիմներու համրանքին: Եթէ այս ընթացքը
շարունակուի, քանի մը տարի յետոյ ուխտագնացներու թիւը ա՛լ աւելի պիտի
մեծնայ քան հաւատարիմ ուխտաւորներունը:

Նոր սերունդը, արդեօք, ուխտադրուած ի՞նչ ըսել է չի գիտեր:

Վարդանանց ճակատամարտին, գտնուեցաւ նախարար մը որ ուխտա-
դրուած դարձաւ ազգային ճգնաժամ պայմարի ընթացքին: Վասակ և Յուդա,
մասնիչ կոչուած են պատմութեան մէջ, որովհետեւ անոնց ուխտադրու-
թիւնը կոչուած է **դաւաճանութիւն**:

Ի՞նչ են այն պատճառները, որոնք կը ստիպեն կամ կը դիւրացնեն
ընտանեկան թեկնածումը:

Բազմադիմի պատճառներու կողքին, հիմնական դրդիչ պատրուակը՝
թեկնածուներու *անձ նաւիցորութիւնը* և *ճտամոցութիւնն* է: Մուրք պսակի
ամուսնութեան մօտեցողներ, պէտք է գիտակցին թէ ամուսնութիւնը **խոր-
հուրդ** մըն է և իր մէջ ունի ուխտի սրբութիւն մը, որ գերբնական առաքինու-
թեան կարիքը ունի զանոնք իրականացնելու համար: Ամուսնութիւնը՝
որքան ալ իր մէջ պարունակէ գերցնծութիւն և սքանչացում, նոյնքան և աւելի
ունի նաեւ պատասխանատուութիւն և երաջխաւորութիւն:

Ամուսնութեան ուխտագնացութիւնը կը կարօտի անհատին զոհողու-
թիւնը արդիւնաբերելու և նպաստաւորելու բարձրագոյն նպատակ մը: Ընկե-
րային և օրէնսդրական կանոնագրութիւնները, դեռ նո՛ր կ'անդրադառնան որ
ընկերային միաւորը ո՛չ թէ *անհատն* է, այլ **ընտանի՛քն** է: Հոռմէական
Կայսրութեան տարածքին, աւանդական ըմբոնումով, *ընտանի՛քը* կը
ճանչցուէր: Ո՛չ թէ *անհատները* կը ճանչցուէին, այլ երկուքի՛ն *միաս որութիւնը*

որպէս մի:

Ամուսնութիւնը կը նմանի գանձանակի մը: Ինչ որ դնես մէջը, միայն ան կը վերստանաս: Գանձանակը հողագործութեան չի նմանիր որուն մէջ մէկ հատիկ ցորեն դնելով հարիւրապատիկ կարենաս ետ առնել:

Ընտանեկան խանգարումը սկսաւ Ճարտարարուեստի յեղաշրջումով և ժողովուրդներու ֆաղափարնակչութեամբ: Կարծեցեալ ազատութեան ու անհատի իրաւունքներուն պաշտպան 20-րդ դարու բարձունքը աւելի անհարկու երեւոյթ ստացած է քան թէ անցեալի նահապետական դարաշրջանը:

Մզլած բարոյականով մարդիկ, վեհերոտ թեթեւահաւատներ պողոն-կագրութիւնը իսէալ ըրած ինելացնոր կը վազեն դէպի ո՞ւր, իրենք ալ չեն գիտեր: Ներկայիս, ի տես մեր աչքերուն, ֆսաներորդ դարը կը սուրայ դէպի բնաջնջումը 20 դարերու մշակոյթին և անոր պարգեւած ապրելակերպին: Անողոք իրականութիւն է, որ արուեստը դաւաճանած է իր կոչման և նիւթը յաղթած է հոգիին՝ երիտասարդներու մտածողութեան մէջ:

Վերոյիջեալ անաստուած մթութեան դէմ, միակ պատնէջը ու վահանը՝ սրբազան ուխտի հաւատարմութիւնն է, որ պիտի փրկէ ընտանիքը ամբողջական բնաջնջումէ: Ընտանիքի՛ն փրկութենէն կախեալ է նաեւ **անհատի՛ն** ազատութիւնը:

Միակնութիւնը՝ իր "բազմազան թերութիւններով" անշուշտ ափսոսալի չէ, այլ ֆաղափակրթուած ապրելու, ազնուական զաւակներ դաստիարակելու, սերունդներ պատրաստելու և ազգին հոգեկան և բարոյական տրամադրութիւնը բարձրացնելու միակ գրաւականն է: Վերելք մը միջոտ դժուար եղած է, մրցանակ ջահիլը ամէն ատեն զոհողութիւն պահանջած է, յաղթանակ մը շարունակ գրկանք և նահատակութիւն կը նշանակէ: Ամուսնութիւնն ու անոր ուխտը, ոչ թէ **վերջակէտ** մըն է, այլ **սկիզբ** մը և առաջին քայլն է սրբազան մարտահրաւերի և դիւցազնական ասպարէզի: Ամուսնական ուխտագնացութիւնը ոչ թէ բան մը **ստանալու** ուղեւորութիւն է, այլ բան մը կարուցանելու և կերտելու՝ յաղթանակն է: Մ. Մեսրոպ Մաշտոց կերտեց Հայ այբբենագիմը: Ան մարտնչեցաւ խաւար տգիտութեան դէմ ո՛չ թէ բան մը ստանալու համար, այլ **տալ ո՛ւ** համար:

Մամիկոնեան և Ղեւոնդեան մահառումները պարգեւատրութեան ջֆանջաններ չէին, այլ գրկանքի և նահատակութեան անձնուրացութիւն:

Ռապինտրանաթ Թակոր ըսած է,

**«Ազատ սեռայնականութիւնը հաճելի է, սակայն
պատիւն ու արժանապատուութիւնը անգերազանցելի»:**

Ապրիլ 30, 1991

Թորոնթօ

ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Պարտականութիւն առանց նուիրումի և ծուխ առանց կրակի: Միթէ այս ճշմարտութիւնները՝ իրական գոյավիճակը չե՞ն պարզաբանելու մեր գաղութի ընկերային, ընտանեկան և կրօնական հաւատքի իսկութիւններուն:

Մարդկային ներկայ դարաշրջանը բազմազբաղ և տարածուած կացութիւն մը ստացած է, ուր իւրաքանչիւր անձ կը ջանայ վայելել նիւթապաշտ գերագոյն հաճոյքը՝ դրամական հարստութեան և զգացական գեիութեան *ակնթարթի* մը մէջ: Անցած է այն ժամանակաշրջանը երբ մեր պապերը *գոհանա՛լ գիտէին* իրենց ունեցած փէջովը: Կը հերկէին իրենց ափ մը հողը եզան արօրով ու հոռովելով: Բնաւ չէին մոռնար գովաբանել զԱստուած երբ ոսկեգոյն ցորենը, որ բաղդատմամբ այսօրուանին, աննշան էր, կը ժողվէին իրենց փոքր շտեմարանը: Իսկ այսօր, ներկան կը պատկանի *անմիջականին*, ինչպէս (instant) սուրճի և իր նման ուսեստեղէններու շարքին, որոնք ոչ համ ունին և ոչ ալ բուրմունք: Անոնք *ընդօրինակութիւններն* են իրականին, արտաքին երեւոյթը ունին ճշմարիտին, սակայն կորսնցուցած են անոր իսկութիւնն ու ներգործութիւնը: Մարդկութիւնը, այսօր, կ'ապրի ձեւակերտ (plastic) աշխարհի մը մէջ ուր երեւութեանը, արուեստականը և անբնականը յաղթական դարձած են:

Գաղթաշխարհի մէջ ունինք զանազան հոյակապ ազգային կեդրոններ: Այդ փառաւոր կեդրոններու մէջ գործող ազգայիններ, իրենց պարտականութիւնը որքա՞ն և ի՞նչ *նուիրումով* կը կատարեն: Մրցակցութեա՞ն հոգիով թէ *ա՛զգասիրակա՛ն* ոգիով: Հայրենասիրութիւն բառը, որպէս դիմա՞կ և երեւո՞յթ կը գործածուի, թէ կեդրոնի անկեղծ և իսկութեան մէկ արտայայտութիւնն է: Ազգասիրութիւնն ու անոր դարաւոր մշակոյթը՝ *իւրճ* մըն է բազմացնելու և յաւերժացնելու համար կուսակցութեան մը անունը, թէ *նուիրու՛մ* մըն է ազգին *անբողջակա՛նութեան* և պատուար մը անոր անբաժանելիութեան...:

Ընտանիքներու օճախէն դէպի երկինք բարձրացող ծուխը, իր սկզբնական սիրոյ բոցն ու լոյսը ունի՞: Այդ բոցը կրնա՞յ շերմացնել և իրար զօդել ընտանիքին *բոլոր* անդամները: Ընտանիքը, իր անդամներով միաձո՞յլ է, թէ ցրուած: Իրարու սեղանակի՞ց են, թէ իրարմէ բաժնուած և տարբեր ժամերու կը ճաշեն: Ծնողք մը ժամանակ կը սրամաղդէ՞ իր զաւակներուն դաստիարակութեանը, թէ այդ պարտականութիւնը յանձնած է դպրոցի ու եկեղեցիի անվա՛րժ մանկավարժներուն: Քանի՞ ընտանիքներ կը պահեն Հայ հաւատքի "ճաջակեսցուք"ը իւրաքանչիւր ճաշէն առաջ՝ հաւատարով և զԱստուած գովաբանելով:

Ամուսնական կենակցութեան *անձնագոհութի՛ւնն* է որ կը կնքէ և կը միաւորէ երկու անձնականութիւնները և կը մշտնջենաւորէ անոնց ձեռնար-

կուլթիւնները: Ամուսնական կեանքը ոչ թէ պարտականութիւն է մը սեպուելու է, այլ **մարտահրաւէր** մը, ուր երկու կամքեր և երկու անձնականութիւններ կը գործակցին իրարու հետ ցոյց տալու այն ոգեկան սիրոյ բոցն ու նուիրումը որ գրաւականն է բարձրագոյն ստեղծութիւններուն: Ամուսնութիւնը, ոչ թէ կ'ընծայուի կամ կը ստացուի, այլ կը **կերտուի**՝ քայլ առ քայլ սիրոյ և զոհողութեան նուիրատուութեամբ և ո՛չ որպէս պարտաւորութիւն կամ հրահանգ:

Մեր սրբակենցաղ հաւատաւորները կերտեցին և հիւսեցին արարողութիւններ ոչ որպէս գրական զարդափայտակներ, այլ յարաբերութեան և հաղորդութեան կամուրջներ, ճանչնալու Աստեանելին և Աննիւթականը և թեւելու դէպի Արարիչին: Մերտե՛նք աւետարանաշո՛ւնչ արարողութիւնները, որոնք կը ներթափանցեն հոգւոյն ներքնամասը ու կը թելադրեն մեզ նուաճելու և տիրելու մարդկային սրբազան ձգտումին--յաւերժութեան: Այդ հոգեպարար արարողութիւնները՝ յարաբերութի՛ւններն են Աստուծոյ հետ, որոնք կը դաշնաւորեն մեր հոգիներու և մարմիններու բնարը:

Նեղմտութիւն չի նկատենք մեր դարաւոր եկեղեցական արարողութիւնները որպէս անշահ և ժամանակավրէպ ձեւակերպութիւններ: Պաշտամունքի այդ ծէսերը յարաբերութեան մէջ կը դնեն մարդ արարածը իր Արարչին հետ: Ո՞րք չկայ ծէս և արարողութիւն: Խնճոյքի պահուն մոմավարութիւնը, երաժշտութիւնը և գինեձօնութիւնը միթէ ծէ՛ս և արարողութիւններ չե՞ն: Ի՞նչ երկար ծէսեր ու արարողութիւններ կը կատարուին համաշխարհային ողիմպիական մրցումներու սկզբնաշրջանին: Ազգային ի՞նչ մեծ արարողութիւններ տեղի կ'ունենան արեւներու ջգեղ թագադրութեան հանդէսներուն:

Ժամերո՛վ կը դիտենք մարգախաղերը Ֆութպոլի, Հոֆիի կամ Պասէլթպոլի և բնաւ չենք ձանձրանար: Ինչո՞ւ, որովհետեւ կը **հասկնանք**: Որովհետեւ այդ մարզիկներու իւրաքանչիւր ջարժումը մեզ կը հետաքրքրէ: Մեզմէ իւրքանչիւրը՝ ինքզինք այդ մարզիկին հետ նոյնացուցած է ու հոգեկան յարաբերութիւն մը կը գգայ: Խաղարկութիւնը այլեւս դարձած է ոչ թէ *մարզիկի՛ն* հերոսութիւնը, այլ **հանդիսա տեսներո՛ւ չնը**: Հեռատեսիլի պաստառին վրայ *մե՛նք* ենք այդ մարզիկները և դերակատարները:

Նոյնը ըլլալու է նաեւ մեր հաւատքի և նուիրումի հոգեկան յարաբերութիւնը Աստուծոյ հետ: Միայն կղերականն ու դպրաց դասը չեն որ կ'երգեն ու կը պատարագեն, այլ մե՛նք՝ հոն ներկա՛յ եղողներս: Հոգիով և շունչով միանալու ենք Աստուծոյ: Սրբազան արարողութիւնները կամրջելո՛ւ են մեզ երկնաւորին հետ, որպէսզի Աննիւթականն ու Հոգեկանը դառնան շօշափելի և իմանալի մեզ նման հողեղէններու:

**Գրուած, Յունիս 25, 1991--
Թորոնթօ**